ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 14.08.2017թ.
ժամը 12 [30]

Մասնակիցներում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏԱ վարչության պետ գնդապետ Հ. Կարապետյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, հետախուզական և քիմիական միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան,
ՀՀ ԶՈՒ ԳՇ Ս և Զ բաժնի չափիչ տեխնիկայի բազայի մեխանիկական չափումների լաբորատորիայի պետ, կապիտան Ի. Կոստանյան,
ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, կապիտան Հ. Բարսեղյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀՇ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին **«ՊԻՊԱՍ ֆուդ» ՍՊԸ**-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Իսկ **«Էրկա Սթայլ» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետում ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը որոշեց մերժել 2-րդ չափաբաժնում **«Էրկա Սթայլ» ՍՊԸ**-ի հայտը: Միաժամանակ քանի որ 2-րդ չափաբաժնում **«Լեգալ պլյուս» ՍՊԸ**–ի առաջարկը գերազանցում էր պատվիրատուի՝ տվյալ գնումների համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, գների նվազեցման նպատակով 18.08.2017թ. ժամը 11:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) բավարար գնահատված և տվյալ չափաբաժնի մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ կվարվեն միաժամանակյա բանակցություններ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

18.08.2017թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները. Հրավիրված բանակցությանը **«Լեգալ պլյուս» ՍՊԸ**-ն չներկայացավ: Միաժամանակ գնահատող հանձնաժողովը 2-րդ չափաբաժինը հայտարարեց չկայացած:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց **«ՊԻՊԱՍ ֆուդ» ՍՊԸ**-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից 1-ին չափաբաժնում և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-16/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող, (ԳԱՊ)	Հ. Կարապետյան
Գնահատող,	Տ. Գասպարյան
Գնահատող	Ի. Կոստանյան
Գնահատող	Հ. Բարսեղյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝	Ա. Բաղրամյան